



Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

04 հոկտեմբերի 2013թ.

ք. Գյումրի

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

նախագահությամբ դատավոր՝
քարտուղարությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ՝

Ս.ՄՆԱՅՅԱՆԻ
Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆԻ
Ի.ՎԱՆՈՅԱՆԻ

Դո՛ւրաց դատական նիստում, քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Մելանյա Պարույրի Գասպարյանն /հասցե՝ Շիրակի մարզ գյուղ Ախուրյան 11 շենք, թիվ 8 բնակարան, անձնագիր՝ ԱՍ0223154 տրվել է՝ 02.03.2011թ. 030-ից/ ընդդեմ Շիրակի մարզի Ախուրյանի գյուղապետարանի, երրորդ անձինք՝ Սեդա Սերգեյի Թորոսյանի /հասցե՝ ք.Գյումրի Շիրակացի 8-րդ գ/թ, շենք 6, թիվ 25 բնակարան/, Խորեն Վելիխանի Թորոսյանի /հասցե՝ ք.Գյումրի Շիրակացի 8-րդ գ/թ, շենք 6, թիվ 25 բնակարան/ և Շիրակի մարզպետարանի /հասցե՝ ք.Գյումրի Գ.Նժդեհի 16/՝ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին:

Դատաքննությամբ և գործի նյութերի ուսումնասիրությամբ դատարանը

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմություն


Քաղաքացիական գործով հայցվոր՝ Մելանյա Պարույրի Գասպարյանն ընդդեմ Շիրակի մարզի Ախուրյանի գյուղապետարանի, երրորդ անձինք՝ Սեդա Սերգեյի Թորոսյանի, Խորեն Վելիխանի Թորոսյանի և Շիրակի մարզպետարանի՝ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով 2013 թվականի մայիսի 30-ին հայց է ներկայացրել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

Հայցադիմումը վարույթ է ընդունվել 01.06.2013 թվականին:

05.04.2013 թվականին գրավոր կազմված, նոտարական կարգով վավերացված թիվ 626 լիազորագրի համաձայն հայցվոր՝ Մելանյա Պարույրի Գասպարյանը լիազորել է փաստաբան՝ Իշխան Աղասու Վանոյանին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 42 հոդվածի պահանջներով դատարանում ներկայացնելու իր շահերը:

02.10.2013 թվականին հայցվոր՝ Մելանյա Պարույրի Գասպարյանի ներկայացուցիչ՝ Իշխան Աղասու Վանոյանը դատարան է ներկայացրել դիմում համաձայն որի հայտնել է, որ նկատի ունենալով, որ գործը հնարավոր է լուծել արտադատական կարգով, գործի քննությունը գտնվում է նախապատրաստական փուլում, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետով հրաժարվում է հայցից և խնդրել է քաղ.գործի վարույթը կարճել:

Քաղաքացիական գործով պատասխանող՝ Շիրակի մարզի Ախուրյանի գյուղապետարանը, երրորդ անձինք՝ Սեդա Սերգեյի Թորոսյանը, Խորեն Վելիխանի Թորոսյանը և Շիրակի մարզպետարանը պատշաճ կարգով ծանուցվել են դատական նիստի վայրի և ժամանակի մասին, ներկայացել են քաղաքացիական գործի նախապատրաստական փուլի դատական նիստերին, սակայն 02.10.2013թ. դատական



Մտնց թիվ 8221-13
09. 10. 13

նիստին լինելով պատշաճ ծանուցված պատասխանողի ներկայացուցիչը, երրորդ անձ՝ Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչը և երրորդ անձինք դատաքննության չեն ներկայացել:

Դատարանը գնահատելով գործի հանգամանքները և ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր.ի 118 հոդ. քաղաքացիական գործի դատաքննությունը կատարել է պատասխանողի և երրորդ անձանց բացակայությամբ:

2. Հայցվորի ներկայացուցչի հրավական դիրքորոշումը:

Հայցվոր՝ Մելանյա Պարույրի Գասպարյանի ներկայացուցիչ՝ Իշխան Աղասու Վանոյանը 02.10.2013 թվականին դատարան է ներկայացրել դիմում համաձայն որի հայտնել է, որ նկատի ունենալով, որ գործը հնարավոր է լուծել արտադատական կարգով, գործի քննությունը գտնվում է նախապատրաստական փուլում, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 6-րդ կետով հրաժարվում է հայցից և խնդրել է քաղ.գործի վարույթը կարճել:

3. Պատասխանողի և երրորդ անձանց հրավական դիրքորոշումները:

Քաղաքացիական գործով պատասխանող՝ Շիրակի մարզի Ախուրյանի գյուղապետարանը, երրորդ անձինք՝ Սեդա Սերգեյի Թորոսյանը, Խորեն Վելիխանի Թորոսյանը և Շիրակի մարզպետարանը պատշաճ կարգով ծանուցվել են դատական նիստի վայրի և ժամանակի մասին, սակայն պատասխանողի ներկայացուցիչը, երրորդ անձ՝ Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչը և երրորդ անձինք դատաքննության չեն ներկայացել և որևէ միջնորդություն չեն արել:

4. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Այսպիսով, դատարանը գնահատելով գործի փաստական հանգամանքները, ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր.ի 109 հոդ. 6-րդ կետով և 110 հոդվածներով, գտնում է, որ քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ:

02.10.2013 թվականին հայցվոր՝ Մելանյա Պարույրի Գասպարյանի ներկայացուցիչ՝ Իշխան Աղասու Վանոյանը գործելով լիազորագրով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում դատարան է ներկայացրել դիմում համաձայն որի հայտնել է, որ նկատի ունենալով, որ գործը հնարավոր է լուծել արտադատական կարգով, հրաժարվում է հայցից և խնդրել է քաղ.գործի վարույթը կարճել:

Դատարանը գնահատելով քաղաքացիական գործի փաստական հանգամանքները, հայցվորի միջնորդությունը գտնում է, որ այն ենթակա է բավարարման:

Դատարանը հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական տուրքը վճարված է ուստի այդ հարցը համարում է լուծված:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132, 109 և 110 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Յ

Մելանյա Պարույրի Գասպարյանի հայցն ընդդեմ Շիրակի մարզի Ախուրյանի գյուղապետարանի, երրորդ անձինք՝ Սեդա Սերգեյի Թորոսյանի, Խորեն Վելիխանի Թորոսյանի և Շիրակի մարզպետարանի՝ բնակարանի նկատմամբ սեփականության